Արձանագրություն N 2

ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

«03» հունիս 2026թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մարտիրոսյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետի պարտականությունները կատարող.

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Մուշեղյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ.

Փ. Քալաջյան - «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի տեխնիկական դեպարտամենտի համակարգչային ցանցի ադմինիստրատոր.

Գնումները համակարգող

Լ.Սահակյան՝ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ

Ա. Հովսեփյան - «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի ավագ ադմինիստրատոր ԳՊ/ԳԱ.

1. Տեղեկություններ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից ներկայացված հիմնավորումների վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

2.Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հակադարձ աճուրդի օրը՝ 03.06.2026թ.-ին ժամը 12:00-ին:

Գնման վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն պահանջվել:

Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:

3.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակիցների անվանումը	Տվյալները
«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	ՀՎՀՀ- 00861057, հասցե. ք.Երևան, Վարդանանց 18/2, Հեռ. 010 54-43-48, 095 51-99-17, էլ. փոստ՝corp@patron.am
«Բի Լայն» ՍՊԸ	ՀՎՀՀ 02522096, հասցե. ք. Երևան, Խանջյան 50, Հեռ. +37410578825, էլ. փոստ՝ edita.simonyan@bi-line.am

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովը որոշեց.

- կասեցնել նիստը և հայտերի գնահատումն իրականացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- նիստը վերսկսել 04.06.2026թ. ժամը 10:00-ին:

04.06.2026թ. ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամները, բացի Ա.Հովսեփյանից՝ շարունակեց կասեցված նիստի աշխատանքները:

- Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել են միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի /1-ին չափաբաժնի մասով «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի/ ներկայացված հայտը, համաձայն որի «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

5.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

Հ/հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները									
		«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ					«Բի Լայն» ՍՊԸ				
		Արժեք (ՀՀ դրամ)		ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)		Արժեք (ՀՀ դրամ)		ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)	
		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ
1	Ցանցային երթուղագծիչներ	28,274,200	27,979,875	20	33,929,040	33,575,850	28,262,500	28,262,500	20	33,915,000	33,915,000

Գնման գործընթացն իրականացնել «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն:

6. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. Բավարար գնահատել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի հայտը:
2. Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող/ընտրված/ մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

7.Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հաղթող մասնակցի հետ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ (անգործության ժամկետը լրանալուց հետո՝ 14.06.2026թ.-ից հետո)՝ կնքվելու է գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի Նախագահ _____ **Ա. Մարտիրոսյան**

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ս. Մուշեղյան**

_____ **Փ. Քալաջյան**

Գնումները համակարգող՝ _____ **Լ.Սահակյան**